


ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՏԱԳՐՈՒԹԻՒՆ



Հոռվայ սուրբ Պետրոսի հրապարակը :

ՀՈՐՎԱՅ սրբոյն Պետրոսի տա-
ճարը տեսնողը այնպէս կը հիանայ կը
զարմանայ , որ հարկաւ կ'ըսէ ինքն-
իրեն . մարդս իր երախտագիտութիւ-
նը իր արարչին ցուցնելու համար
ասկէ աւելի աստուածավայել բնա-
կարան մը չէր կրնար շինել Մտուծոյ :

Եւ տաճարին փառահեղ տեսքն ու
մեծագործ զարդերը ստորագրելը ու-
րիշ անգամի ձգելով , հոս հիմա հրա-
պարակին վրայ միայն խօսինք :

Չկայ մէկ ճանապարհորդ մը որ
վատիկանեան տաճարին հրապարա-
կը ոտք կոխէ , ու չզարմանայ չապշի :

Բոլոր չորս կողմը սիւնազարդ յար-
կածածուկ ճեմերէք , որ հարիւրաւոր
կառքերու՝ անձրեւէն ու արեւէն պա-
տրսպարուելու տեղ կուտան . դէպ 'ի
երկու կողմերը երկու հաս մշտա-
բուղի շատրուաններ՝ սոսկալի ուժով
մը յստակ ջրերը վեր կընետեն , ու
ետքը արծաթափայլ հեղեղի պէս
փրփրալով՝ կրանիթ քարէ շինած գե-
ղեցիկ աւազաններուն մէջ կը թա-
փեն , արեւուն զարկած ատենը՝ ծիրա-
նի գօտիներ ձևացնելով : Մէջտե-
ղը եգիպտական կոթողը աշտարակի
մը պէս բարձրացած , փարաւոններ-

նուն սնափառութեանը տեղը՝ քրիստոնէական խոնարհութեան նշանը սուրբ խաչը իր բարձր ծայրին վրայ կը ցուցնէ։ Տրապարակին ճակատն ալ հրաշալի տաճարը իրեն հռչակաւոր գմբէթովը։ աս սքանչելի տեսարանը մարդ սոսկ մտքովն ալ երեւակայելու ըլլայ, չկրնար զարմանքը բռնել։

Բգեքսանդր է, որ 1655^ն պապ եղաւ, շինել տուաւ աս հրապարակը Պետրինի ասպետին, և ճարտարապետը կիսաբոլոր ձեւն ընտրեց։ Տրապարակին բոլորտիքը չորս կարգ կճեայ սիւներ կան, անոնց ծնօտին վրայ ալ ամէն դիէն քարէ վանդակ՝, ու առջեւի դիէն կարգաւ սուրբերու արձաններ։ Եւ չորս կարգ սիւներով իրենք ճեմելիք կը ձեւանայ, մէկը մէջ տեղը՝ երկուքն ալ երկու կողմը։ Եւ հրապարակիս մեծութիւնը այնչափ է որ շատ անգամ մարդ ինչուան հրապարակը հասած ըլլալով՝ յոգնուած ենէն աչքը չառնէր ինչուան ժամը երթալու, անկէց մինչև ժամուն աւագ խորանը՝ ուր է սուրբ Պետրոսի գերեզմանը՝ քառորդի մը ճամբայ ըլլալով։ Իսկ մէջտեղի կոթողին ծայրի խաչէն՝ ինչուան ժամուն գմբէթին վրայ եղած խաչը՝ օդէն շիտակ գիծ մը ձգես նէ, մղոնի մը երկայնութի է։ Եւ հրապարակիս մէջը երկու կէտ կայ, որ հոն կենալու ըլլաս նէ՝ ան կողմի չորս կարգ սիւները մէկ կարգ մը միայն կ'երեւան, կատարեալ բոլորակի մը շառաւիղներ ձեւացընելով։ Եւ յաջափ խելքէ դուրս ըլլալով աս հրապարակիս մեծութիւնը, այսու ամենայնիւ մարդ անոր ծայրն ալ կենալու ըլլայ նէ՝ հազիւ քիչ մը կը տեսնէ եկեղեցնայ գմբէթը, չափէ դուրս ժամուն ճակտէն հեռաւորութեանը համար։

Արքայն Պետրոսի հրապարակը հաւկըթաձեւ ըլլալով, տրամագիծը 588 ոտքէն ինչուան 738 ոտք է։ Եւ մէկ

մէկ սիւնազարդ թեւին մէջը կան 142 սիւն ու 64 կամարակալ, այսինքն աղիւսակերտ քառակուսի մեծ սիւն։ Սիւներուն բարձրութիւնը 40 ոտք է։ Եւ սիւներուն վրայ 9 ոտք բարձրութեամբ մէկ ծնօտ մը կայ։ Երկու դիմացի վանդակներուն վրայ ալ 96 արձան կայ, որոնց ամէն մէկը 10 ոտք բարձրութիւն ունի։ Եւ ճեմելիքներուն մէջէն երկու կառք դիմացէ դիմաց հանգիստ կրնան անցնիլ։ Տրապարակին մէջտեղի կոթողը կաղիքաղա կայսրը Եգիպտոսէն հռովմ բերել տուած ու 11 ատիկան լեռան ստորոտը եղած կրկիսին մէջ կանգնած է եղեր։

Եւ հրապարակին գեղեցկութիւնը տեսնելու է զատկի ու սուրբ Պետրոսի տօնին իրիկունները, երբոր բովանդակ եկեղեցւոյն գմբէթը, ճակատը, ու հրապարակին բոլորտիքը կը լուսաւորեն։ Եւ անբաւ մեծութեւ հրապարակին մէջը որ դին կենալու ըլլաս, համարձակ կրնաս գիրք կարդալ։ Եւ ուսաւորութեան մէջը բոլոր ճարտարապետական ձեւը՝ թէ եկեղեցւոյն և թէ հրապարակին՝ կ'երեւնայ։ Եւ ուսաւորելու օրը առաւօտուը նէ հարիւրաւոր մարդիկ ներս կը փակեն, որպէս զի չըլլայ թէ կէսօրը շատ խմելով ու գինովնալով՝ լուսաւորելու ատեննին դժբաղդութիւն մը պատահի։ ասանկով մինչև հիմա փորձանք մը պատահած չէ։ Եւ ընդ բերանը կը տեսնես բոլոր գմբէթը կանթեղներով լուսաւորած, անանկ որ անկէց աւելի բանի չի բաղձար աչքդ։ մէյմըն ալ յանկարծ աչքդ բանաս գոցես՝ աւմէն երկու կանթեղին մէջէն մէյմէկ ջահ բռնկած կը տեսնես, անանկ որ կանթեղներուն լոյսը անոնց առջին կը խաւարի, ու բովանդակ գմբէթը կ'ըլլայ մէկ անբաւ բոց մը։ Ատորադրելով չկրնար իմանալ մարդ՝ ինչուան որ աչքով չտեսնէ։